



COVID-19

Տվյալների կառավարման պարադիգմայի
փոփոխությունը



Grant Thornton

| An instinct for growth™

COVID-19 համավարակի անսպասելի բռնկումն ի հայտ բերեց գործարարության և, ընդհանուր առմամբ, ժամանակակից հասարակության անպատրաստվածության ու ռիսկերի կառավարման պատշաճ քաղաքականության բացակայության հետ կապված մի շարք խնդիրներ, որոնց հաղթահարմանն ուղղված պատասխան գործողությունները, որոշ դեպքերում, դրսևորվեցին ընկերությունների անձնակազմի կրճատմամբ կամ գործարար գործունեության դադարեցմամբ:

Սույն հրապարակման միջոցով «Գրանթ Թորնթոն» Հայաստանի խորհրդատուները Ձեր ուշադրությանն են ներկայացնում բիզնեսի ռազմավարության և ռիսկերի կառավարման քաղաքականության սահմանման նպատակով բիզնեսի վերափոխման, «Մեծ տվյալների» վերամշակման և ժամանակակից աշխարհի գործարար գործառնությունների տարբեր ասպեկտների վերլուծության կարևորությունը:

Սույն հրապարակման վերաբերյալ հարցերի դեպքում, ինչպես նաև տվյալների վերլուծությունները՝ Ձեր բիզնեսի շահերին ծառայեցնելու հնարավորությունների վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվություն ստանալու համար, խնդրում ենք կապ հաստատել մեզ հետ:

Հետաքրքիր զարգացումները դեռևս առջևում են, ուստի հետևեք մեր հաջորդ հրապարակումներին ևս:



Grant Thornton

Ինչու՞ է հիմա փոփոխությունների իրականացման ճիշտ ժամանակը

Արդյո՞ք դուք ունեք կայուն և սթրեսադիմացկուն բիզնես



Այս հարցին պատասխանելու համար յուրաքանչյուր ձեռնարկատեր պետք է տիրապետի ոչ միայն ներքին կամ համաշխարհային համապատասխան շուկաներում տիրող իրավիճակին, այլև ավելի լայն պատկերացում ունենա ներկայիս համաշխարհային շուկաների և հասարակությունների փոխկապակցվածության վերաբերյալ, մտածի «արկղից դուրս»: Իրենց գոյության ընթացքում ընկերությունները կարող են պատրաստ լինել որոշ կառավարելի ռիսկերի, սակայն գլոբալ մարտահրավերները, որոնց կարող է հանդիպել յուրաքանչյուր ընկերություն, սովորաբար անկանխատեսելի են և ունենում են զգալի ազդեցություն: Գլոբալիզացիայի ներկայիս մակարդակը բարձրացրել է ամբողջ աշխարհում «դոմինոյի» էֆեկտի հավանականությունը և դրա հետևանքների ծանրությունը: Աշխարհի մի մասում տեղի ունեցող անսպասելի բնական աղետները, քաղաքական խնդիրները, պանդեմիաները կամ գլոբալ այլ խնդիրները կարող են նաև ողբերգական հետևանքներ ունենալ աշխարհի մյուս մասերում:

Կորոնավիրուսային համավարակի բռնկումը, որի արդյունքում ամբողջ աշխարհում անորոշ ժամանակով դադարեցվել են բիզնես գործընթացները, ցույց է տվել, որ ընկերությունների մեծ մասը պատրաստ չէր վատագույն սցենարին:

Նման իրավիճակում ընկերությունները պետք է կարողանան ժամանակին որոշումներ կայացնել և մեղմել հնարավոր ֆինանսական կամ հեղինակային ռիսկերը:

Արագ և ճիշտ որոշումներ կայացնելու համար ընկերությունները իրենց գործունեության սկզբից պետք է հավաքագրեն և վերահսկեն բիզնեսին առնչվող տվյալները: Բայց միայն անհրաժեշտ տվյալներ ունենալը բավարար չէ գալիք մարտահրավերներին դիմակայելու համար: Ընկերությունները պետք է ունակ լինեն արագ վերլուծել հավաքագրված տվյալներն ու ժամանակին որոշումներ կայացնել: Ժամանակակից աշխարհում տվյալների ծավալն այնքան է աճել, որ առանց համապատասխան գործիքների տվյալների վերլուծությունը կարող է խիստ ժամանակատար լինել և ազդել վերջինիս որակի վրա: Ահա այստեղ բիզնես ինտելեկտը տվյալների վերլուծության հետ համատեղ կարող են օգնել ընկերություններին դիմակայել լուրջ մարտահրավերներին:

Նորմալ պայմաններում բիզնեսը առանց խոչընդոտի վարելու ունակությունը և շուկայում առաջատարներից մեկը լինելը մեծ ձեռքբերում է, սակայն ռիսկերի կառավարման ճիշտ քաղաքականության բացակայությունը կարող է գլխիվայր շրջել իրավիճակը ընդհուպ մինչև բիզնեսի լուծարում:

Տվյալների շրջահայաց հավաքագրումը և վերլուծությունը, անշուշտ, կօգնեն յուրաքանչյուր ընկերությանը տեղական կամ համաշխարհային ճգնաժամերի ընթացքում անկանխատեսելի կորուստները մեղմելու գործում:

Տվյալների արդյունավետ վերլուծությունը թույլ է տալիս տնտեսվարող սուբյեկտներին մշակել ռիսկերի կառավարման ռազմավարություններ և ընդունել մարտավարական որոշումներ՝ դիտարկելով լավատեսականից մինչև առավել վատատեսական սցենարները:

Առավել խոր վերլուծության միջոցով ընկերությունները կարող են բացահայտել առաջին հայացքից աննկատելի օրինաչափություններ և փոխկապակցվածություններ տարբեր տվյալների հատվածների միջև, ինչը կօգնի ռիսկերի կառավարման արդյունավետ քաղաքականության մշակմանը: Ռիսկերի կառավարման կայուն քաղաքականությունը պետք է ներառի և՛ ռազմավարական, և՛ մարտավարական գործողությունների ծրագրեր:

Ներկա պայմաններում ընկերությունների համար գլխավոր մարտահրավերը, անկախ գործունեության ոլորտից, տեխնոլոգիական առաջընթացին համապատասխանությունն է, որն ամեն օր զարգանում է: Արագորեն աճող տվյալների ծավալները պահանջում են համապատասխան գործիքներ՝ դրանք հավաքագրելու, պահպանելու, վերահսկելու և վերլուծելու համար բիզնեսի ողջ կյանքի ընթացքում:

Ընկերությունների մեծ մասը շարունակում է պայքարել տվյալների գծով գլխավոր տնօրենի (CDO) դերի և գործառույթների դեմ, մինչդեռ միայն փոքրամասնությունն է համարում այդ պաշտոնի դերակատարումը հաջողված և կայացած: 2020 թվականին կազմակերպությունների գրեթե կեսը նախընտրում են դիմել փոփոխությունների արտաքին գործակալների խորհրդատվությունը և աջակցությանը: Ըստ այդ հետազոտությունների՝ ընկերությունները շարունակում են նշել տվյալների կառավարման համար պատասխանատու մեկ կատարողի մասին, մինչդեռ ոմանք դեռևս նույնացնում են CDO- ին՝ որպես այս գործառույթների համար պատասխանատու հիմնական կառավարչի:

Այս իրավիճակում, բիզնես վերլուծությունների ծրագրաշարի կիրառումը հնարավորություն է ընձեռում ընկերություններին հավաքագրել և վերլուծել տվյալները և դրանք վերածել բիզնեսի մասին լիարժեք պատկերացումների:

Ինչպե՞ս մնալ գործարար միջավայրի առաջնագծում

Fortune 1000 վարկանիշային ցանկի 70-ից ավելի ընկերությունների բարձրագույն ղեկավարության շրջանում անցկացված տարեկան հարցման արդյունքների համաձայն՝ բիզնեսները ձգտում են դառնալ «տվյալներով առաջնորդվող», սակայն առաջընթացը դեռևս դանդաղ է: Կազմակերպությունների ավելի քան 90% -ը համարում է մարդկանց և գործընթացները որպես հիմնական խոչընդոտներ «տվյալներով առաջնորդվող» ընկերություններ դառնալու հարցում:

Ընկերությունների գրեթե 75% -ը «Մեծ տվյալների» կիրառումը համարում է հեռանկարային խնդիր, մինչդեռ նրանց մեկ երրորդը արդեն հասել է այդ խնդրի լուծմանը: Բացի այդ, շուրջ մեկ քառորդ ընկերություններին հաջողվել է ստեղծել տվյալների հետ աշխատանքի հատուկ մշակույթ:



Տվյալների հսկայական զանգվածներից անցումը դեպի գաղափարների

Տվյալների և դրանց բազաների չափազանց մեծ ծավալները, որոնք առաջանում են բազմազան ձևերով և բազմաթիվ աղբյուրներից ընդունված է անվանել «Մեծ տվյալներ»:

Դրանք թվային «տիեզերքի» մասնիկներն են, որոնք կրկնապատկվում են յուրաքանչյուր երկու տարին մեկ՝ մարդկանց և ձեռնարկությունների առցանց աշխատանքի և հաղորդակցության, ինչպես նաև համացանցով տվյալների փոխանցման և ստացման սարքերի հաղորդակցման միջոցով (Internet of Things-IoT):

Որքան մեծ են «Մեծ տվյալները»

Ըստ IDC- ի կողմից հրապարակված վերլուծական նյութի (2014 թ.), թվային տիեզերքը մինչև 2020 թվականը կպարունակի գրեթե նույնքան թվային բիթ, որքան աստղեր կան ֆիզիկական տիեզերքում և կհասնի 44 զետտաբայթի (ZB) կամ 44 տրիլիոն գիգաբայթի (GB):

Համեմատության համար նշենք, որ այս թիվը 2013-ին հավասար էր 4,4 ZB: IDC- ի այս հետազոտության վերաբերյալ թարմացումները 2018-ի վերջին նախատեսում էին մինչև 2025 թվականը ամբողջ աշխարհում գոյություն ունեցող 175 ZB ծավալով տվյալներ, ընդ որում տվյալների նույնքան մեծ թիվ պահպանվում է ամպային միջավայրում, որքան տվյալների կենտրոններում: Հավանաբար, այս թիվն էլ ավելի կբարձրանա COVID-19- ի պայմաններում համատարած հեռավար աշխատելաոճին անցնելու արդյունքում:

Մեծ տվյալների հավաքագրումն ու պահպանումն այսօր զարգանում է էքսպոնենցիալ արագությամբ, սակայն կարևոր խնդիր է դրանք կիրառության մեջ դնելը այս կամ այն կարիքները բավարարման համար:

Ինտենսիվորեն զարգացող տեխնոլոգիաները ընկերություններին հնարավորություն են տալիս տվյալների հսկայական քանակությունը գործուն լուծումների վերածել:


Ընդ որում, ամեն անգամ տվյալների վերլուծությունը հնարավորություն է տալիս նոր պատկերացումներ ստանալ դրանցից: Այնուամենայնիվ, հարկավոր է հաշվի առնել այն հետաքրքիր փաստը, որ ոչ բոլոր տվյալներն ունեն վերլուծության ներուժ:

Այս առումով առավել կարևոր զարգացումներից մեկը «Արհեստական ինտելեկտի» (AI) կիրառությունն է, որն ընդլայնում է «Մեծ տվյալների» վերլուծության և IoT պլատֆորմների հզորությունը՝ բիզնեսի համար նշանակալի արժեք ապահովելու համար, ներառյալ մատակարարման ցանցերը, վաճառքի և շուկայավարման գործընթացները, արտադրությունը, սպասարկման մոդելները և այլն:

Տվյալների պահպանման ու մշակման գործընթացները շարունակում են զարգանալ, քանի որ տվյալների ինժեներները շարունակաբար փնտրում են բոլոր հնարավոր աղբյուրներից ստեղծված բարդ տեղեկատվության հսկայական քանակները ինտեգրելու ուղիներ:

Հսկայական քանակությամբ տվյալների հետ աշխատանքը լրացուցիչ հնարավորություններ է ընձեռում ընկերություններին՝ միաժամանակ առաջադրելով նորանոր մարտահրավերներ:

Մեծաքանակ տվյալների վերլուծության որոշ առավելություններ ներառում են.



Մեծաքանակ տվյալներից օգտվելու համար կազմակերպությունները ստիպված կլինեն դիմակայել հետևյալ մարտահրավերներին.

**Մեծաքանակ տվյալների
հասանելիության
ապահովում**

Հմտությունների բոլոր մակարդակների օգտատերերը պետք է կարողանան օգտվել տվյալներից

**Որակյալ
տվյալների
ապահպանում**

Հաշվի առնելով տվյալների հսկայական քանակը՝ ընկերությունները չափազանց շատ ժամանակ են ծախսում կրկնօրինակների, սխալների, տվյալների բացակայության, կոնֆլիկտների և անհամապատասխանությունների վերացման վրա

**Տվյալների
անվտանգության
ապահովում**

Հաշվի առնելով գաղտնիության և անվտանգության աճող մտահոգությունները՝ ընկերությունները պետք է ձգտեն նաև անվտանգության ստանդարտների համապատասխանության

**Ճիշտ գործիքների և
հարթակների
ընտրություն**

Ընկերությունները պետք է գտնեն իրենց կայացած էկոհամակարգերի շրջանակներում աշխատելու և իրենց առանձնահատուկ կարիքները բավարարելու համար պիտանի տեխնոլոգիական լուծումներ

Բիզնես վերլուծությունների ծրագրային լուծումներ

Մեծաքանակ տվյալների կուտակման պայմաններում բիզնես վերլուծությունների գործիքները, ինչպիսիք են տվյալների վիզուալացումը, տվյալների պահպանումը, տվյալների ամփոփ վահանակները (dashboards) և հաշվետվությունները, անհրաժեշտ են դառնում տվյալների հավաքագրման, վերլուծելու և օգտակար գործարար պատկերացումների վերաձելու համար:

Տվյալների աճող ծավալների պայմաններում համաշխարհային շուկայում ծրագրային գործիքների պահանջարկն աճել է՝ շուկան ապահովելով արդյունավետ և վստահելի արտադրանքով:



Tableau տվյալների ներկայացման գործիքը




Համակարգ մուտքից մինչև համատեղ օգտագործում Tableau ծրագիրը ամենահզոր, անվտանգ և ճկուն պատրաստի վերլուծական պլատֆորմներից մեկն է: Այն հնարավորություն է տալիս այնպիսի վերլուծություններ կատարել, որոնք նախկինում հնարավոր չէին, ապահովում է պարզ և կրկնվող ալգորիթմների օգտագործումը և ստեղծում է ինտերակտիվ հաշվետվություններ, որպեսզի վերջնական օգտագործողներն հնարավորություն ունենան իրենց առանձնահատուկ նպատակների համապատասխան հաշվետվություններ կազմել:


Ծրագրային ապահովման այս արտադրանքը 2020 թվականի առաջին եռամսյակի արդյունքներով ութերորդ տարին անընդմեջ դիրքավորվել է Gartner Magic Quadrant պլատֆորմում որպես տվյալների վերամշակման և բիզնես վերլուծությունների առաջատար: Ծրագրաշարի հիմնական հատկանիշներն են հզոր վերլուծական հնարավորությունները, ճկունությունը, մասշտաբային արագ ադապտացումը և ռազմավարական ուղղվածությունը: Տաբլոն տվյալների ամփոփ վահանակներում ներկայացնում է նաև բնական լեզվի մշակման առանձնահատուկ լուծում, որը թույլ է տալիս ավտոմատ կերպով գեներացնել վիզուալիզացիայի վրա հիմնված տեքստային նկարագրություններ՝ հաճախորդներին օգնելով «կարդալ» տվյալները:

Տվյալների կառավարման կարողությունները


«Մեծ տվյալներ»




Քարտեզներ




Շուկայական հետազոտություններ և վերլուծություններ



Խելացի վերլուծություններ



Ժամանակագրական շարքերի վերլուծություններ



Գործարար տվյալների ամփոփ վահանակներ



Համաձայն 2019 թվականի Tableau-ի տարեկան ժողովի ընթացքում հայտարարված ցուցանիշների՝ ընկերության օգտագործողների թիվն աճել է ավելի քան 1 միլիոն անդամների, 500+ օգտվողների խմբերի, ավելի քան 65 երկրներում:

Իսկ Tableau Public- ը, որն այժմ հանդիսանում է աշխարհի ամենամեծ տվյալների վիզուալ պահեստը, ներառում է ավելի քան 2 միլիոն տվյալների վիզուալ հաշվետվություններ, որոնք արժանացել են ավելի քան 2,3 միլիարդ դիտման:

Այժմ Tableau-ն առաջարկում է 3 ամիս ժամկետով անվճար Tableau արտոնագրեր փոքր բիզնեսի համար, որոնցից շատերը հատկապես կրել են վնասներ այս ճգնաժամի հետևանքով:


Իր 20 տարվա գործունեության ընթացքում «Գրանթ Թորնթոն» Հայաստան ընկերությունը առնչվել է մի շարք արտաքին և ներքին մարտահրավերների հետ, հաստատել կայուն դիրքեր տեղական շուկայում առաջատարների շարքում և ավելին, ընդլայնել գործողությունների աշխարհագրությունը՝ հիմնելով ընկերություններ Վրաստանում, Տաջիկստանում, Ղրղզստանում, Լիբանանում, Մոնղոլիայում և Բելառուսում: Բարձր որակավորում ունեցող անձնակազմը, գործառնական գործիքների պարբերական արդիականացումը, գործառույթների բոլոր ոլորտներում լավագույն փորձառությունն ու հաճախորդների շրջանում հաստատված վստահությունն արտացոլում են «Գրանթ Թորնթոն» Հայաստանի կարողությունները աջակցելու բիզնեսին հաղթահարելու դժվարությունները և պատրաստ լինելու ապագա մարտահրավերներին:

Գրանթ Թորնթոնում մենք գիտակցում ենք, որ նորարարությունը, ճկունությունը և դինամիկ զարգացումը այժմ դարձել են մեր մասնագիտության և մեր ծառայությունների մատուցման հիմնաքարերը:

Այսօր «Գրանթ Թորնթոն» Հայաստանը տարածաշրջանում առաջատարներից մեկն է թվայնացման և թվային փոխակերպման ծառայությունների առաջխաղացման և դրանց հասանելիության ապահովման հարցում: Մեր ռազմավարական առաջնահերթությունները կենտրոնացած են ներքին գործընթացների համար թվային պլատֆորմներից օգտվելու և տվյալների հավաքագրման, պահպանման, մոնիտորինգի և վերլուծության համար օգտագործվող նորարարական տեխնոլոգիաների շուրջ:

Բարձր տեխնոլոգիական լուծումները մեր ընկերությանը հաղորդում են արդյունավետություն ներքին հաղորդակցության բոլոր ոլորտներում, տվյալների փոխանակման, ծրագրերի կառավարման և նույնիսկ անձնակազմի գնահատման հարթակներում: Մենք հասկանում ենք «Մեծ տվյալների» մշակման և վերլուծության կարևորությունը, ինչպես նաև տվյալների հսկայական քանակության հետ աշխատելու մարտահրավերները:

Ի հավելումն «Գրանթ Թորնթոն» Հայաստանի կողմից մատուցվող ավանդական ծառայությունների, վերլուծական գործիքների օգտագործումը, ինչպիսին է Tableau-ն, մեզ հնարավորություն է տալիս կատարել համալիր վերլուծություններ մեր հաճախորդների գործունեության տարբեր ասպեկտների վերաբերյալ: Նման վերլուծությունների շարքին են դասվում հետևյալ լուծումները.





www.grantthornton.am

© 2020 Grant Thornton Armenia. All rights reserved.

"Grant Thornton" refers to the brand under which the Grant Thornton member firms provide assurance, tax and advisory services to their clients and/or refers to one or more member firms, as the context requires.

Grant Thornton Armenia is a member firm of Grant Thornton International Ltd (GTIL). GTIL and the member firms are not a worldwide partnership. GTIL and each member firm is a separate legal entity. Services are delivered by the member firms.

GTIL and its member firms are not agents of, and do not obligate, one another and are not liable for one another's acts or omissions.

Այսպիսով, եթե ձեր բիզնեսը փնտրում է տվյալների կառավարման պարզ, միևնույն ժամանակ հզոր մոդելներ տվյալների հսկայական քանակությունը մշակելու և վերլուծելու, խոր վերլուծություններ կատարելու և տվյալների վրա հիմնված որոշումները կայացնելու համար, կարող եք դիմել մեզ:



ՀՀ, ք. Երևան 0012,
Վաղարշյան փ. 8/1



+374 10 26 09 64



gta@am.gt.com

Որոշման առանցքային բառեր՝ Բիզնես վերլուծություններ (BI), # Տվյալների վերամշակում, # Մեծ տվյալներ, # Թվայնացում, # Թվային փոխակերպում